

հակոտնեայ շարադրութեամբ, արծիւը կը ըութեանց¹ վրայ ուսումնասիրութեանս գտնուի վիշապին վրայ: Վիշապը (օձա- հետ այս ուսումնասիրութիւնս ալ կընայ նման) զալարուած, օղակուած կը մնայ օգտակար ըլլալ Հայկական գորգերու դա- յաղթական արծիւին մագիլներուն կամ սաւորմանց և խմբաւորմանց համար. ասկէ



Ս. ԷՋՄԻՍՅԻՆ

Լուս. Հ. Գ. Նահապետեանի

Ձուարթնոց եկեղեցւոյն չորս սիւներուն խոյակներէն մին՝ Արշակունեաց արծիւով

Այս պատմական խմբանկարին մէջ կը տեսնուի եղբարարատ Ամիրտաս Վ.ը (զեռ սարկաւազ), Միւրթարեան Ուխտիս երկու հայրերուն միջեւ. աջին՝ Հ. Գ. Վ. Նահապետեան, ձախին՝ Հ. Ս. Վ. Յովսէփեան:

Սպիտակագգեստ վարդապետը՝ Խաչիկ Վ. Դատեան պեղումներով զբաղած:

քին: Կ'արժէ այս երկու օրինակները հա- մեմատել իրարու հետ: Հոս որոշ կ'երեւայ քրիստոնէութեան յեղաշրջումը:

Այսքան վիշապին, փիւնիկին և ար- ծիւին վրայօք:

Հայ և Արաբ գեղարուեստի յարաբե-

ութիւնը Գամգաս, Մ. Ն. 1930 Դեկտ.

զատ անոնք կը կազմեն օղակները շրջ- թային որ գորգերու գծագրութեանց զաղտ- նիքներուն լուսարանութիւնը կը ներկա- յացնեն հետզհետէ:

1. Հրատարակելի Անահիտի մէջ. այժմ պատրաստ:

Յ. ԶԻՆՐՏԵՆՆ



ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՃՍԿԱՏԱԳՐԻՆ

(Զ. ԴԱՐԷ Ն. Ք. ԲՐԻՍՏՈՍ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

(Շար. տես Բազմավէպ 1931, էջ 246)

ԳԼՈՒԽ Ե.

Բիւզանդական Հայաստան և Պարսկական Հայաստան. — Յուստինիանոսի և իր յաջորդներուն գործունէութիւնը Հայաստանի մէջ. — Արաբական տիրապետութիւնը. — Կոիւնքը ընդմէջ Բիւզանդիոնի և Արաբացւոց՝ Հայաստանի համար. — Բազրատունիք և Մամիկոնեանները. — Կարգ մը ընդլզումներ Մահմետական լուծին դէմ. — Բազրատունեաց թագաւորութեան իշխանութեան հասնիլը. (422-885)

Երկու դարերու ընթացքին մէջ (Ե և Զ) Հայաստան բաժնուած մնաց հռոմէական կայսրութեան (Բիւզանդիոնի) և Պարսկա- ներու միջեւ: Այս երկու մասերուն բախտը միօրինակ չէր¹: Բիւզանդական մասին մէջ մտած էր կայսերական վարչութիւն: Պար- մտած էր կայսերական վարչութիւն: Պար- սից մասին մէջ, ըստ բացատրութեան հայ պատմագրին Եղիշէի, — «Թագաւորութիւնը անցաւ նախարարաց ձեռքը», այսինքն կալուածատէր իշխաններու: Պարսից թա- գաւորը կը նշանակէր հոն իւր մարզպանը (կառավարիչ), բայց սա նախ կը կառա- վարէր նոյն նախարարներու միջոցաւ, տուրքեր հաւաքելով, ընծեռելով պայմա- նաւորներ հաւաքելով, ընծեռելով պայմա- նաւորներ զօրք եւն. եւն., նաղրուած չափով ձիաւոր զօրք եւն. եւն., և երկրորդ՝ ժամանակէ մը ետքը նոյն մարզպանի պաշտօնի տեղ սկսան նշանա- կուիլ առանձին նախարարներ: Այսպէս աստիճանաբար Հայաստան տրոհուեցաւ իշխանական մանր և մեծ շարքերու, որոնց իշխանականութիւնն առ կեդրոնական իրական հպատակութիւնն առ կեդրոնական իշխանութիւնը շատ տարբեր էր մէկմէկէ: Ե - Ե դարերու Հայկական յուշարձանները կը հաշուեն մինչեւ 50 իշխանութիւններ, որոնց մէջ մասնաւորապէս յառաջացած էին Մամիկոնեանները, Բազրատունի և Ար- ծրունի ասպետներ: Պէտք է դիտել, որ կա- լուածատէր իշխանները Բիւզանդական Հա- յաստանի մէջ, այն դարաշրջանին, նոյն-

պէս ձեռք ձգած են մեծ ազդեցութիւն, այնպէս որ բոլոր Հայաստանի մէջ աւա- տական դրութիւնը կը զարգանար կեանքի կազմի մէջ: Բայց Բիւզանդական Հայաս- տանը յօժար կամքով կը հպատակէր հա- լատակից կայսեր իշխանութեան, յան- ձնառու ըլլալով հելլենականութեան նոր հոսանքներուն: Ընդհակառակն Պարսկա- կան Հայաստանը տուայտանքով կը տանէր անհաւատներու լուծը, և հոն, իրենց ազ- գային իշխանութիւնը ի դէմս տեղական նախարարներու կ'առնէր մասնաւոր պատ- կառելի նշանակութիւն:

Հայոց պարսկական տիրապետութեան դէմ ունեցած տոգոհութիւնը երկար շարքով ապստամբութեամբ կ'արտայայտուէր Ե և Զ դարերու շրջանին: Արդէն 451 թուին բոլոր Պարսկահայաստանը վառուած էր ապստամբական բոցով, ասիկա առիթ առաւ Յազկերտ Բ. ջնջելու քրիստոնէութիւնը իր երկրի վրայէն: Միաժամանակ ապստամ-

1. Յաջորդ բացատրութեանց մէջ մենք կը հետեւինք Յ. Տուրքերի և Ն. Աղոնցի, ինչպէս նաեւ համեմա- տական մասերու մէջ Ջիւրբոնի, Թ. Ուսպենսկիի, Իւր- կուլակովսկիի, Ծ. Գիւլի եւն. Բիւզանդիոնի պատմիչ- ներու, լրացնելով անոնց տուած տեղեկութիւնները ժա- մանակակից պատմիչներու վկայութեամբ. Յոյներու (Պրոկոպիոսի եւն.) և Հայոց (Սեբեոսի, Յովհաննէս Կա- թողիկոսի, Ղ. Եւսեպիոսի եւն.):

բութիւնը պատրաստ էր տարածուելու բո-
լոր երկիրը¹, մինչդեռ Վասակ Սիւնի
մարզպանը դիտաւորութիւն ունէր զլուս-
անցնելու անոր, և կը սպասէին օգնու-
թեան ինչպէս բիւզանդական Հայաստանէն
(որուն վարիչն էր Վասակ Մամիկոնեան),
նոյնպէս Թէոդոս կայսրէն, Վրաստանէն,
Աղուաններէն և Հոններէն: Սակայն օգնու-
թեան հասնելու յոյսերնին չիրականացաւ.
այն ատեն Բագրատունիք և Վասակ Սիւ-
նին ետ կեցան ապստամբական գործէն:
Հայկական ռազմախումբը՝ որուն առաջ-
նորդն էր Վարդան Մամիկոնեան (Մեծն)
յաղթուած էր Աւարայրի դաշտին վրայ,
Արաքսի մօտ: Բայց պարսիկները դիմա-
դրութեան հանդէպ գտնուելով, ետ կեցան
հայերը կրօնափոխ ընելու չար դիտաւո-
րութենէն: Յետոյ Վարդանին հետ պա-
տերազմի մէջ ինկողները Հայ Եկեղեցին
սրբոց դասը կարգեց (Վարդանանք): Երե-
սուն տարի՝ վերջ պարսկահայերը նորէն
ապստամբեցան: Անոնց առաջնորդն էր
Վարդանի եղբորորդին՝ իշխան Վահան
Մամիկոնեան, որ երկու տարի յաջողու-
թեամբ կռուեցաւ պարսից դէմ, մինչեւ
որ անոնք տեղի տուին և զինքը մարզ-
պան նշանակեցին (488 տ.): Ժառանգու-
թեամբ մարզպանական իշխանութիւնը
Վահանի եղբօր՝ Վարդի անցաւ, բայց սա
երբ փորձեց պարսկական լուծը թօթափել
(511 տ.), իշխանութենէ զրկուեցաւ և
նորէն պարսիկ մը նշանակուեցաւ երկրի
վարիչ:

2 զարու կէսին աստիճանաբար կը սկսի ընդարձակուիլ Բիւզանդական Հայաստանը ի վնաս պարսից: Բիւզանդական Հայաստանը նախ կը բաժնուէր երեք զաւառներու. հիւսիսային կամ բուն Հայաստան (Մեծն Մարտիրոսօղիւս կեդրոնական քաղաք. Էրզրումի մօտ). Երկրորդ Հայաստան (Սեբաստիա կեդր. քաղաք) և Երրորդ Հայաստան (Մելիտինէ կեդրոնական քաղաք). ասոնց հետ միացաւ Պոնտոս Պոլեմոն (ծովեզերեայ երկիրը, Տրապիզոն և Նէոկեսարիա կեդր. քաղաքներով): Յուստինիանոսի պարսից դէմ մղած յաջող

պատերազմները (527-565 տ.) պարսկա-
կան Հայաստանէն (Չորրորդ Հայաստան)
կայսրութեան հինգ ստորապութիւններ
տուին: Բոլոր այս ընդարձակ երկիրները²
գինուորական վարչութեան տեսակէտով,
Յուստինիանոս բաժնած էր առանձին նա-
հանգի՝ որուն գլուխ նշանակած էր մաս-
նաւոր զինուորական պետ մը (magister
militum): Այս պաշտօնին գլուխը կո-
չուած էր Սիստա հռչակաւոր հայը (աղ-
բիւրներու մէջ Sitta, Tzetta, Zeta),
որ իր կարգին ընդարձակեց Հայաստանի
սահմաններ, ինքնագլուխ կոիւներ մղելով
ընդդէմ խաշնարած ցանկ ցեղերու (san-
noi, czani): Յուստինիանոսէն վերջ ալ
շարունակուեցաւ Բիւզանդական Հայա-
ստանի ընդարձակութիւլը: Պարսկական Հա-
յաստանի մէջ նորէն ծայր տուաւ ապս-
տամբութիւնը, վասն զի պարսիկները
Դընոյ (յունաց մէջ Doubios) մէջ կրակի
տաճար կանգնեցին: Ապստամբներուն զը-
լուին էր, նոյն անունը կրող, ինչպէս և
դիւցազն ապստամբութեան հարիւր տարի
առաջ Վարդան Մամիկոնեան: Ապստամբ-
ները կայսրութեան (571 տ.) պաշտպա-
նութեան դիմեցին, և սկսաւ երկարատեւ
պատերազմ Բիւզանդիոնի և պարսից միջև:
Պարսից զօրքն աւերակ դարձուցին Հա-
յաստանը, և յոյներն անոնց սահմաններն
անցնելով չարագոյն եւս քան պարսիկ-
ները վարուեցան անոնց հետ. կողոպտե-
ցին, կրակի տուին, սպանութիւններ և
հարստահարութիւններ ըրին: Յետ քսան
տարուան կռիւներու Մօրիկ կայսեր ժա-
մանակ խաղաղութիւն կնքուեցաւ 591ին,
աւելի պարսից մէջ խռովութիւն ծագելուն
համար, այլ ոչ թէ յունաց զօրքերու յաղ-
թութեամբ: Սակայն և այնպէս Բիւզան-
դիոն Պարսկական-Հայաստանի նշանաւոր
մասը ստացաւ. Աղձնիք, Տարօն, Այրա-

1. Վարդանանց ապստամբությունն նկարագրում է հան-
մասին մենք կը հետևեինք Ն. Աղոնյի եզրակացությունը,
... Վարդանանց Վասակի գործընկերը:

2. Քիպեղբալի յօրինած այն ժամանակի Հայաստանի քարաքանդ, հրատարակուած կուլակոսկիի ձեռքով. հա-
տոր Բ:

րատ, և նոյնպէս Վրաստան՝ Թիֆլիզով։
Մօրիկի մահէն վերջ նորէն պատերազմը
բռնկեցաւ (602-628 տ.)։ Հերակլ կայսրը
անձամբ կ'առաջնորդէր զօրաց. կարգ մը
յաղթութիւններ տարաւ պարսից զէմ և
վերջ ի վերջոյ հարկադրեց ու պարսիկ-
ները խաղաղութիւն կնքեն։ Յուստինիա-
նոսի և Մօրիկի բոլոր Հայաստանը քանի
մը յաւելումներով Հայաստանի մնացին։

է դարձուն սկիզբը (628 քն վերջ) Իր-
զանդական Հայաստանի արեւելեան սահ-
մանը կը հասնէր մինչեւ Վանայ լիճը:
Հերակլ, երկրին վարչութիւնը բաժնելու
ժամանակ՝ քանի մը փոփոխութիւններ
ըրած է, ինչպէս Չորրորդ Հայաստանը
բաժնած է երկու գաւառներու՝ որոնց
հարաւայինը անուանած է Վերին Մի-
ջագետք: Երկիրը կը կառավարուէր կայ-
սեր նշանակած կիւրապաղատներով, բայց
շատ անգամ հայ հասարակութենէն ըն-
տրուած: Առաջին կիւրապաղատն եղած
է Դաւիթ Սահառունի, որ նախընթացա-
բար Պարսկահայաստանի մարզպան եղած
էր, բայց սա վաճառուած է բնակիչներէն, և
Հերակլ նոյն պաշտօնին մէջ հաստատեց
(636 տ.) ըստ ժողովրդեան բաղձանաց
(636 տ.) ըստ ժողովրդեան (Թորոս) Ռշտունին. յե-
իշխան Թէոդոր (Թորոս) Ռշտունին. յե-
տոյ այս միեւնոյն պաշտօնը վարած են
վարազտիրոց Բագրատունին (643 տ.),
որդին Սմբատ, Համազասպ Մամի-
կոնեան (652 տ.) և ուրիշներ: Հայ Ե-
կեղեցին 598 տարւոյն բաժնուելով Յոյն
եկեղեցիէն, ազատ եկեղեցի եղաւ, յետ
որոյ ամենամեծ նշանակութիւն ունեցած
են ժողովրդական կեանքի մէջ տեղական
պատրիարքները (կաթողիկոսները), որոնց
աթոռանիստ քաղաքը Դուին էր, և որոնց
եկեղեցական իրաւասացութեամբ, Հերակլ

պարտաւոր էր յանձնել բոլոր Բարձր
Հայաստանը: Պարսկահայաստանի մէջ ալ
Զ դարու վերջերը և է դարու սկիզբը
շատ անգամ հայ մարզպաններ նշանա-
կուած են. Սմբատ Բագրատունի (Յաղթող,
593), Դաւիթ Սահառունի (601), Վա-
րդապիտոյ Բագրատունի (625) և ուրիշ-
ներ²:

Խալամին երեւնալն և արարներու տի-
րապետութիւնը վրդովեցին կրկին Հայաս-
տաններու կարգաւորեալ կենաց ընթացքը:
630ին արարները խորտակած էին պարսից
տիրապետութիւնը: Յետ որոյ խալիֆայի
զօրքը ներս խուժեց Բիւզանդական Հա-
յաստանի սահմանները: Նախարարները
որոշեցին դիմադրել, յոյսերնին դնելով
իրենց կայսեր օգնութեան վրայ, բայց
Բիւզանդիոն կ'ուզէր օգտուիլ Հայոց նեղ
դրութենէն, յօգուտ եկեղեցեաց միութեան:
Սկսաւ ծանր պատերազմը, Հայաստան նու-
րէն տուժեց Արեւելի թշնամիներէն (մահ-
մետական և արաբ) և յոյներէն: Դրու-
թիւնը այն աստիճան ծանր էր, որ շատ
ազգեցիկ հայեր նախընտրեցին հպատակիլ
խալիֆաներու իշխանութեան քան թէ կայ-
սեր, որ ճնշում կը գործէր հաւատքի ա-
զատութեան վրայ: Յետոյ Հայերը նամակ
մը ուղղեցին Յուստինիանոս Բ կայսեր.
«Քանիցս հաւատարիմ մնացինք յոյնե-
րուն, անոնցմէ հիմնական օգնութիւն չու-
նեցանք մեր կարօտութեան մէջ: Շատ ան-
գամ մեր հաւատարմութեան փոխարէն
նախատինքով մեզի հատուցած են: Չեզի-
(Յունաց) հաւատարմութեան երդում տալը
կը նշանակէ՝ զմեզ կործանումի և մահուան
դատապարտել: Լաւագոյն է թողուր զմեզ
մեր ներկայ տէրերուն (արարներու) որոնք
1913 թ. կր. պաշտպանեն»:

[illegible]

2. Կրկին Հայաստաններուն կրեւածադատութիւնը մարզպաններուն ընդհանուր զումարը՝ Սէն-Մարթէն, Երվ. Ս. 414-418:

3. Գ. Տուրնբերգ, էջ. 97, 98. Յովհան Կաթողիկոս, ԺԳ:

31

1. Այս գաւառներուն միացումը չիրականացանց իւրովութեան, Հայոց մեծ մասը Բագրատունի Սմբատ իշխանին առաջնորդութեամբ յարարեցութեան մէջ մտաւ պարսից հետ. բայց բիւզանդացիք ժամանաւոր շարժումին առջեւն առին, աւելի բարձրացոյն կարգի կէն շարժումին առջեւն առին, աւելի բարձրացոյն կարգի շահերն ի նկատի առնելով, քան ժողովրդեան կամքին հետեւելով: Կը նշանակենք որ Յուստինիանոսի պատե-

642ի յունուարին արաբները յար-
ձակումով առին Դուին, 12,000 անձ
կոտորեցին և 35,000 հոգի գերի տարին:
Այն ատենուան Հայաստանի կառավարիչը՝
Կոստանդ Բէն նշանակուած վարազտիրոցն
էր, Հերակլի թոռը. բայց վարազտի-
րոց շուտով վախճանեցաւ, և անոր որ-
դին և յաջորդը Սմբատ՝ (643 տ.) լա-
ւագոյն համարեցաւ հարկ տալ Օմար խա-
լիֆային, քան թէ արաբացւոց դէմ պա-
տերազմը շարունակել: Կոստանդ կայսրը
զօրախումբի գլուխն անցած՝ գնաց Հա-
յաստանի սահմանները, քաղաքական հը-
պատակութիւն և կրօնական միութիւն
պահանջելով. և Ներսէս Բ կաթողիկոսը
պատրաստ էր Յունաց զիջանելու, երբ
արաբացւոց նոր խուժումը՝ Հայաստանն
իր նախընթաց դրութեան դարձուց:

Սմբատի յաջորդեց՝ Մամիկոնեանց ցե-
ղէն Համազասպ, որ ազնուականութեան
և կերպարայնութիւն տիրոջս ստացաւ: Հա-
մազասպ արաբացւոց տուրքը մերժելու
փորձ մ'ըրաւ, որուն ի պատասխան Օ-
մար խալիֆան 1,775 հայեր սպանել
տուաւ, որոնք արաբներու քով պատանդ
էին: Խալիֆայութեան մէջ տիրող խռ-
վութիւնները յապաղեցին արաբացւոց յա-
ջորդ վրէժխնդրութիւնը: Վերջապէս 652
թուին՝ Դամասկոսի Մուաւիա խալիֆան
բազմաթիւ զօրքով խուժեց Հայաստան՝ և
սկսաւ երկիրն ամայացնել: Համազասպ
արաբացւոց հետ բանակցելով՝ վերջնա-
կանապէս ճանչցաւ անոնց գերիշխանու-
թիւնը Հայաստանի վրայ:

Արաբները կազմակերպեցին զՀայա-
ստան՝ իրեն և իրենց թագաւորութեան գա-
ւառներէն մէկը, որով մտաւ Ատրպատա-
կան փոխարքայութեան կազմին մէջ. վրան
տուրքը դրուեցաւ, ինչպէս նաեւ 15,000
ձիաւոր մատակարարելու պարտաւորու-
թիւն: Այնտեղ արաբները կառավարիչ մը
նշանակեցին, զոր հայ պատմիչները
հրամանատար կամ ուտիկան կ'անուանեն,
որու աթոռանիստ քաղաքն էր Դուին:
Այսպիսի առաջին կառավարիչ Մուաւիան
թողուց Համազասպ Մամիկոնեանը. յե-

տոյ նոյն պաշտօնին ընդունուած էր իր
եղբայրը Գրիգոր (659 տ.) որ սպաննուե-
ցաւ խոզարներու դէմ մղուած պատերազ-
մի ընթացքին. յետոյ դարձեալ՝ Աշոտ
Բագրատունի (685 տ.): Սակայն այս
դրութիւնը կարելի չէր երկար տեւել.
ուստի հայերը այս յուսահատ վիճակէն
շուտով դուրս ելլելով՝ ստիպուած եղան
մահմետականաց իշխանութեան ենթար-
կուիլ, և արաբական լուծէն ազատելու
համար՝ յաջորդաբար փորձեր կատարե-
ցին:

Է դարու վերջերը և սկիզբը Ը դարու
Հայաստան լեցուած է ժողովրդական ա-
պրտամբութեամբ խալիֆայից իշխանու-
թեան դէմ, որոնք սակայն այն տեղ հա-
սուցին, որ երկրի կառավարիչներն սկսան
մակեդոնացիներ նշանակել: Առաջին ա-
պրտամբութիւնը Աշոտ Բագրատունիի ժա-
մանակ եղած է. հայերը խրախուսուած
էին բիւզանդական զօրաց Հայաստանի
սահմանները մերձենալէն, խոզարներու
դէմ գնացած ժամանակը: Յոյն զօրապետը՝
Ղեւոնդիոս՝ օգտուելով ժողովրդային շար-
ժումներէն գրաւեց Հայաստանի մէկ մասը,
որու բնակիչները գնացին բիւզանդա-
կանաց իրեն և ազատարարներու: Յուստի-
նիանոս Բ կայսրը Հայաստանի կառավա-
րիչ նշանակեց Շիրակայ իշխան Ներսէսը
(688 տ.): Բայց հազիւ թէ բիւզանդական
զօրքը թողուց Հայաստան, Արբելմէլէք
Օմմէպդ խալիֆան մտաւ հոն, անգութ
Օմմէպդ խալիֆան մտաւ հոն, անգութ
կերպով աւերեց երկիրն, և նորէն գրաւեց
Դուին: Այն ատեն առաջին անգամ Հա-
յաստանի կառավարիչ նշանակուեցաւ
մահմետական Աբդալլահ (693 տ.): Տասը

1. Յաջորդաբար մենք կը հետեւինք Ղեւոնդիոսի
Յ. Տուրքմէնի, օգտուելով Յովհան 2. կաթողիկոսէն,
Սեբէոսէ, Ղեւոնդիոսէ, ինչպէս նաեւ Ան-Մարթէնի
տեսութենէն «Համառօտ Պատմութիւն Հայոց»:
2. Այսպէս կը բացատրեն դէպքերը՝ նոր պատմա-
բանները Տուրքմէնի, Ն. Աղոնց եւն., Ղեւոնդիոսի և
նորիշ պատմաբաններու հիմանց վրայ, Սեբէոս (Գ. 33-
38) ուրիշ կերպ կը պատմէ, բայց անոր աւանդածները
(ազգային առասպել) չեն համապատասխաներ յոյն հե-
ղինակներուն:

տարի վերջ ապստամբութեան դրօշը բար-
ձրացուց Սմբատ Բագրատունին. Բիւզան-
դիոնի օգնութեամբ սա յաղթեց արաբա-
ցիներուն Արաքսի եզերքը, Այրարատայ
ստորոտը: Արաբացւոց վրէժն անողորմ
էր. ի միջի այլոց անոնք նենգութեամբ
բռնեցին բազմութիւն հայ իշխանաց և
եկեղեցւոյ մէջ (ի Նախիջևան) ողջ ողջ
այրեցին: Հայաստանի կառավարիչն էր
մահմետական Կէպզէն (704 տ.):

Երկու իշխանական տուններ այն ժամա-
նակները Հայաստանի մէջ մեծ դիւբի
տէր էին, Բագրատունիք և Մամիկոնեան-
ները. առաջինները 703 տարւոյն ապրա-
տամբութենէն յետոյ, համոզուեցան որ
անկարելի էր յայտնի կերպով կռիւ մղել
ստրկացնող պետութեան դէմ: Բագրա-
տունիք որոշեցին խաղաղ ապրել արաբ-
ներուն հետ, և այն օրէն սկսան ամէն
կերպ նկրտիլ իմանալու համար անոնց
տրամադրութիւնը (ինչպէս կը գործէին
Մուսկուայի առաջին իշխանները Ոսկեայ
Մամիկոնեանները հանդէպ): Քանի որ
Մամիկոնեանները հակառակ քաղաքակա-
նութեան կը հետեւէին, կը պաշտպանէին
և իրենք կը կազմակերպէին ապստամբու-
թիւնը, խալիֆաները բնականապէս հա-
մակրութիւն ցոյց կու տային դէպ ի Բա-
գրատունիները: Ասոնք արաբներու ժամա-
նակ պահեցին իշխանական, Արբելմէլէք
սպարապետի տիրոջսները և կ'օգտուէին
խալիֆայական ուրիշ առանձնաշնորհու-
թիւններէ: Յաջորդաբար երբ պէտքը ըլ-
լար երկիրը խաղաղեցնելու, Հայաստանի
կառավարիչ նշանակելու տեղացի մը (հայ),
խալիֆաներու ընտրելին եղած է միշտ
Բագրատունի իշխաններէն մէկը: Այսպէս
սկսաւ Բագրատունեաց տան վերելքը, որ

հասցուց յաջորդ դարուն վերջերը Թա-
գաւորական թագի: Իշխանութեան հաս-
նելու այս հանդարտ և «զաղտնի» կռիւը
չորս տասնեակ տարիներ տեւեց, որոնց
ընթացքին Հայաստան ուժասպառ եղած էր
անհաւատներու լուծին տակ: Ի մէջ այ-
լոց հայերը յոյսերնին կտրելով Բիւզան-
դիոնի օգնութենէն՝ բոլորովին բաժնուեցան
յունական եկեղեցիէն, և 719ի Դունոյ
ժողովը կարգ մը մասնաւորութիւններ
հաստատեց Հայ Եկեղեցւոյ Դաւանութեան
մասին:

Բագրատունիք Հայաստանի մէջ բար-
ձրագոյն իշխանութիւն ստանալու իրենց
նպատակին հասան՝ 740ական տարիներ
ուրեմ: Վասակի որդին, Աշոտ Բագրա-
տունի, 744ին՝ Միւրուան Բ խանէն, որ
Օմմէպդներուն վերջինն էր, իշխանական
տիրոջս ստացաւ, և Հայաստանի կառա-
վարիչ անուանուեցաւ: Այս յաջողութիւ-
նը աժան չնստաւ Աշոտի: Ուրիշ հայ
իշխաններ խմբուեցան անոր դէմ, Բագրա-
տունիներու արաբացւոց հանդէպ ունե-
ցած չափազանց անձնութիւնը մե-
ղադրելով: Տժգոհները շատ էին, վասն
զի խալիֆաները Բագրատունի մէջ կառու-
ցումներ ընելու և քաղաքը գեղեցկացնե-
լու նպատակով՝ չափազանց ծանր տուր-
քեր կը պահանջէին: Իշխանները յար-
ձակեցան Աշոտի վրայ, բռնեցին զանի և
կուրացուցին: Նա իր դժբախտութեան մէջ
ալ շարունակեց կառավարել՝ իր որդւոյն
Սմբատի օգնութեամբ, և ապա իր իշխա-
նութիւնը անոր փոխանցեց: Որմէ վերջ,
նութիւնը անոր փոխանցեց: Որմէ վերջ,
աւելի քան հարիւր տարուան ժամանա-
կամիջոց մը, շարունակ Բագրատունիները
կը տեսնենք երկիրն մէջ բարձրագոյն
տեղեր գրաւած, և ումանք՝ վարչութեան

1. Մամիկոնեանց տեսութիւնները գեղեցիկ կերպով
կազմած է հայ պատմագիր Ղեւոնդիոս. «Լաւ է այրա-
բար մեռնել հալընեաց համար, քան թէ ողորմելի
կեանք վարել և հայրենեաց սրբութիւնները տանկողի
եղած տեսնել» (խալիֆայից Պատմութիւն. 1.7):
2. Հայ պատմիչները մանրամասն տեղեկութիւններ
կը հաղորդեն Բագրատունեաց ցեղին նկատմամբ, իբր
կը հաղորդեն Բագրատունեաց ցեղին նկատմամբ, իբր
թէ է դարուն Ն. Ք. Պաղեստինէն գաղթած ըլլան
(ինչպէս Մամիկոնեանք Չինաստանէն, իսկ Արծրունիք

Ատրեստանի Սենեքիմ թագաւորական զարմէն առաջ
եկած): Այս բոլորն առասպելական են, Սակայն ան-
կասկած է, որ տակաւին Բիւզանդական շրջանին Բա-
գրատունիք շատ անգամ կոչուած են Հայաստանի կա-
ռավարչի՝ կերպարայնութիւն, արքունի, մինչեւ իսկ ար-
քունեքուտ արքունի (իշխանաց իշխան) տիրոջսներով:
«Ժողովածոյ տեղեկութեանց Բագրատունեաց վրայ»:
Ան-Մարթէն. Ա. 418 և յաջորդ:

պաշտօնով ոստիկանութեան տիտղոսին արժանացած: Բագրատունիներու այս պիսի բարձրութեանց հասնելու նպաստեցին՝ այս ժամանակամիջոցին Հայաստանի մէջ ստէպ Բոնկոզ ապստամբութիւնները: Հարկ չկայ հետեւելու բոլոր այս մանր բռնկումներուն, ազգային մեծամտութեան¹, բայց պէտք է յիշել մէկ քանի հատ: Այսպիսի շարժում եղաւ Մանսուր խալիֆայի օրով, որ անգութ էր և ընչաքաղց, և դրամ հաւաքելու համար ոչ կեանքի և ոչ ինչքի կը խնայէր: Հարկ հաւաքողներու բռնութիւնները զրգոցեցին զհայերը. ապստամբները Մամիկոնեան իշխանի մը (Արտաւազդ) առաջնորդութեամբ արաբ բերդապահ զօրաց հետ չափուեցան, բայց Բաղդատէն հասած զօրքը զսպեցին ապստամբութիւնը (761): Յետոյ յաջորդեց Մուշեղ Մամիկոնեանի առաջնորդութեամբ կատարուած ապստամբութիւնը որ յաջողեցաւ Դուին առնելու (778), և ապա քանի մը տարի վերջ Աշոտ Մսակերի ապստամբութիւնը, որ ըստ աւանդութեան հիմնարկած է Անի քաղաքը Կարսի և Արփաչայի միջեւ (ապագայ հրաշակերտ մայրաքաղաք Բագրատունեաց թագաւորութեան):

Բոլոր այս ժողովրդային շարժումները յայտնի է որ անգլխօրէն ընկճուած էին:

Նշանաւոր Հարուն—ալ—Ռաշիդի և իր մերձաւոր յաջորդներուն ժամանակ Հայաստան կրցաւ ազատ շունչ քաշել: Եզիտ Բ (786—788) և Կուլիմա (798—818) վարչները Հայոց հետ ներդրամութեամբ վարուեցան, թէպէտ ժամանակակից տարեգրները կը վկայեն արինահեղ անգլխութեանց դէպքերու մասին. օրինակի համար, Եզիտ հրամայեց է մէկ օրուան

մէջ 42 քահանայ սպաննել²: Ալ—Մամունէ խալիֆայի և իր Հոլ կառավարիչին ժամանակ (818—835 տ.) շարունակուեցաւ մեղմ քաղաքականութիւն: Բայց ասոնց ատեն նոր ապստամբութեան բռնկումը տեղի ունեցաւ, առաջնորդութեամբ՝ Մսակեր Աշոտի՝ Սմբատ որդւոյն: Ապստամբութիւնը դիւրաւ ընկճուեցաւ և Հայաստանի մէջ ժամանակաւոր հանդարտութիւն տիրեց: Մինչեւ իսկ երբ 830ին, Թէոփիլ կայսրը զօրքով Հայաստան մտաւ, ժողովուրդն անտարբեր կեցաւ: Կարելի է ասոր հետ կապ ունենայ, որ Հոլի յաջորդ նշանակուեցաւ Բագրատունին Բագարատ (836 տ.) և 13 տարի կառավարիչի պաշտօնին վրայ մնաց: Բագարատի պաշտօնէն հեռացուիլը Հայոց նոր մեծ ապստամբութեան պատճառ եղաւ և որ իր կարգին նպաստեց Բագրատունեաց բարձրանալուն: Մերձաւորապէս 849 տարւոյն Մուտաւակիլ խալիֆան Բագարատի վրան եղած զրպարտութեանց հաւատալով՝ որոշեց քանի պաշտօնանկ ընել և անոր տեղ Հայաստան ղրկել մահմետական ոստիկան Աբուսէթը: Աբուսէթի խստութիւնը զրգոցեց ժողովուրդը. անոր մահէն վերջ իր իւսուֆ որդին աւելի խստութիւնի գործ դրաւ: Ի միջի այլոց զԲագարատ ընտանեօք Բաղդատ ղրկեց, ուր նախկին կառավարիչը տկարացաւ և սպառնալեաց ներքեւ ուրացաւ քրիստոնէութիւնը³: Այս բոլոր դէպքերը՝ հայերը դէպ ի ապստամբութիւն մղեցին, որ արագ կերպով տարածուեցաւ բոլոր Հայաստանի մէջ (852): Շարժումը զսպելու համար՝ Զափրի հրամանով՝ զօրք ղրկուեցաւ խորամանկ, անգութ և վաղեմի ստրուկ թիւրք Բուղայի՝ զեկավարութեամբ: Հայոց առաջնորդներն էին

1. Ահմարկ այս ապստամբութեան մասին. տես Ֆ. Տուրնբերգ. էջ 100 և այլն: Հայաստանի ժամանակակից պատմութիւնը ըննուած է ըստ բաւականի և ժամանակագրական տուեալները կարելի է անվիճելի նկատել:

2. Ֆ. Տուրնբերգ. էջ 101. Յովհան Զ կաթողիկոս ԺԳ:

3. Աւելի կանուխ 820ին, Սմբատ Բագրատունի, թոռնորդի կոյր Աշոտի, նման պարագաներու մէջ կարգէ դուրս քաջութիւն արտայայտեց և նախընտրեց մահը ուրացումի, ասոր համար ալ խոստովանողի մակը իր ստացաւ: Այս Սմբատն էր Աշոտ Ա. հայրը, ապագայ Բագրատունեաց թագաւորութեան հիմնադիր: Ֆ. Տուրնբերգ, 102—103, Յովհան Զ կաթող. ԺԳ—ԺԴ. — 4. Բուղայ որուն թարգմանութիւնը ցույց է. Զափր—Մեծ:

Աշոտ Արծրունի, Սմբատ Բագրատունի, Վասակ և ուրիշներ ցոյց տուին կորովամտութիւն և մեծ արիւթիւն. կռուեցան ճակատ առ ճակատ, յանկարծական յարձակումներ գործեցին, խմբական կռիւներ մղեցին. ընծաներով փորձեցին կաշառել զԲուղայ, սակայն ամէն ինչ ապարդիւն անցաւ: Ապստամբութեան երեք պետերը խորամանկութեամբ կաշառուորուեցան իրարեւորութեան, ու բանտին մէջ լով Բաղդատ ղրկուեցան, ու բանտին մէջ տանջանքներով նահատակուեցան: Հայաստան նորէն հուրի և սուրի մատնուեցաւ:

Սակայն և այնպէս այս վերջին ապստամբութիւնը, ինչպէս կ'երեւի, համոզեց արաբները որ անկարելի է շարունակել Հայաստանի մէջ առաջուան խիստ քաղաքականութիւնը: Ասոր հետ միացան արաբները ղեկավարութիւնները, որոնց մէջ կը գտնուէր խալիֆայութիւնը թերեւս Բագրատունիներու զաւտնի գործակցութիւնով: Ինչպէս որ ալ ըլլար, յետ զսպելու ապստամբութիւնը, Մուտաւակիլ—Բիլլահ խալիֆան որոշեց Հայոց վրայ նորէն հայ իշխանակել: Վիճակն ինչպէս Բագրատունեաց տան, և Աշոտ, որ յետոյ կոչուեցաւ Մեծն, իր ձեռքն առաւ Հայաստանի վարչութիւնը՝ «Իշխանաց Իշխան» ի տիտղոսով (859) զոր քառորդ դար վերջ հասցուց արաբական թագի: Որչափ կարելի է դառն մեզի հասած աղբատին տեղեկութիւններէ, այս Բագրատունի Աշոտը, հիմնադիր արքայական իշխանութեան, կարող է կորովամիտ մարդ եղած է: Իր բոլոր կարողութեամբ աշխատած է քարուքանդ երկիրը խաղաղեցնել. միեւնոյն ատեն զօրք կը կազմակերպէր որպէս զի պատրաստ ըլլան բոլոր յարձակումներն ետ մղելու, և իր Աբաս եղբայրը անոնց պետ կարգեց: Շատ չանցած՝ Աբաս փայլուն կերպով արդարացուց իրեն հանդէպ ցոյց տրուած վստահութիւնը. Արաքսի եզերքը պատերազմի մէջ յաղթահարեց Ախալանուն մէկուն՝ որ իշխանութեան թեկնածուութիւն կը պահանջէր: Ասիկա «Կռիւքառանից» անուանուեցաւ, իբր թէ թըշ-

նամեաց 80,000 մարդոց դէմ՝ արքայական բանակին մէջ 40,000 մարդ միայն ըլլալուն համար: Կարելի է այս կռուին մէջ Հայաստանի ցոյց տուած զօրութիւնը ազգած ըլլայ անոր, որուն հետեւանքով խալիֆայութիւնը այլեւս չհամարձակեցաւ մերժել Բագրատունեաց արքայական տիտղոսը: Յետ քառորդ դարու վարչութեան՝ Աշոտ ստացաւ այս տիտղոսը՝ որ և հաստատեց Մուհամմէտ—Բիլլահ խալիֆան 885 տարւոյն:

Այս կերպով խալիֆայութեան աւատական հպատակութենէն վերանորոգուեցան Հայաստանի մէկ քանի անկախութիւնները, որոնք երկու դար տեւեցին: Սակայն Բագրատունեաց արքայական թագին հասնիլը կը մեկնուի նաեւ խալիֆայութեան տկարանալէն: Բագրատունեաց յաջորդեցին Արծրունիք՝ ինքնավար իշխանութեամբ (874), որոնք յետոյ ունեցան նաեւ արքայական տիտղոս (914) ևն.:

Երկիրը խալիֆայական իշխանութեան նկատմամբ բաժնուեցաւ աւատական դրութեան, որուն համեմատ Հայաստանի մէջ հաստատուեցան մէկ քանի մահմետական հարստութիւններ (Իշխանութիւն Խլաթի, Մանազկերտի) և այլն: Բոլոր այս քաղաքական յարաբերութեան կազմը ընդունեցաւ արեւմտեան Աւստուկանոսքեան բնորոշիչ կէտերը: Այնուհանդերձ ամէնէն աւելի նշանաւոր մնաց Բագրատունեաց թագաւորութիւնը՝ որ ժամանակ մը փարթամութեամբ ծաղկեցաւ և զօրացաւ համեմատաբար:

ՂԱԼԵՐԻ ԲՐԻՒՍՈՎ. (թրգմ. է. Յ. ՄԱՐԿԱՐԵԱՆ)

1. Ֆ. Տուրնբերգ. էջ 105: Զորքը նշանակութիւն ունի միայն իբր արձագանգ հետագայ ներկայացումին: Բագրատունեաց առաջին թագաւորին զօրութեան նկատմամբ, 120,000 պատերազմողաց թիւն անկարելի էր թուիլ թէ զարու աւատական փոքր թագաւորութեան համար: Աւանդութեան հիմը կարող է ստույգ ըլլալ, Սմբատի ընդհարումը՝ իշխանութեան թեկնածուի դէմ, բայց այս կարող էր պատահած ըլլալ նախ քան Աշոտի թագաւորական տիտղոս ընդունիլը: